

բուն առարկան աշակերտներն են, իմ
դատու հոյս մասին է :

Ոնեւիմ . — Շատ լաւ , շարունա-
կէ , կը լսեմ :

(Շարունակելի :)

Ն Ա Մ Ա Կ

. . . խմբագիր ՍԻՕՆ պատուական
Հանդիսի .

Բարեհաճեցէք սոյն գրութիւնս
հրատարակել ՍԻՕՆԻ միջոցաւ 'ի լուր
Աղգայնոց :

Ի վաղուց անտի փափաք ունենա-
լով Ս . Տեղեաց շնորհքն վայելել՝ յա-
ջողեցայ այս անգամ Զմիւռնիայէն ու-
ղեւորիլ 'ի Ս . Երուսաղէմ : Սոյն պա-
տեհ առթիւ իջայ յԱղէքսանդրիա , ուր
տեսնուեցայ Յակոբեան Մեծ . Թադ-
ւոր Պէյին հետ , և անտի անցնելով
յԵփիպտոս , տեղւոյն Առաջնորդ Գեր .
Մեսրովք Արքեպիսկոպոսի շնորհիւ և
Արժ . Տէր Կարապետ քահանայի ըն-
կերակցութեամբ , ներկայացայ Վսեմա-
փայլ Նուպար Փաշային , որոյ հետ ու-
նեցած տեսակցութեանս բախտաւոր
միջոցին վստահացայ օգնութիւն խորն-
դրել Մաղնիսայի Ս . Լուսաւորիչ Ե-
կեղեցւոյն համար , որոյ շինութեան
տեսչութիւնն մեզ յանձնուած է , և
որ թէպէտ շնորհիւ և կարողութեամբ
Բարձրեղն յաւարտ հասած է , սակայն
կան տակաւին ինչ ինչ թերութիւն-
ներ , մանաւանդ գպրոցի մը շինու-
թեան նկատմամբ , որ խիստ կարե-
ւոր է :

Գարձանք մենք յԱղէքսանդրիա ,
ուր վերստին այցելութեան գնացինք
Մեծ . Թադւոր Պէյին , որոյ սակաւ
ինչ տկարութիւնն լսելով՝ 'ի տես եկած
էր նաև Վսեմ . Նուպար Փաշան , թէ
և իսպառ ապաքինուած էր հիւանդու-
թիւնն ողորմութեամբն Աստուծոյ :

Այս տեսակցութեան միջոցին Վը-
սեմ . Նուպար Փաշան որոշեց հարիւր
Գաղղ . ոսկի շնորհել 'ի նպաստ շի-
նութեան Եկեղեցւոյն Մաղնիսայի , և
իսկոյն Մեծ . Թադւոր Պէյն հաճեցաւ
նոյն դրամներն ղրկել 'ի Զմիւռնին յա-
նուն Մեծ . Յակովբ Առաքինասէր
Էֆէնտիի Եսայեան :

Ահաւասիկ բարեպաշտական գործ ,
որ արժանի է դուրսութեան և շնորհա-
կալութեան . գործ՝ որ արժանի է հը-
րատարակութեան յորինակ և 'ի քու-
ջալերութիւն այլոց :

Ուստի քաղցր պարտք համարելով
սոյն ուրախական տեղեկութիւնն Խըմ
բազրութեանդ հաղորդել ,

Մնամ աղօթապարտ Աղգիս

24 Փետր . 1876 թի

Պետրոս Մ . Վ .

յԵրուսաղէմ :

Ներկարարեան :

